

**Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար**

Արմավիրի մարզի Արշալույսի գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ (ծածկագիր 3.3-1)

**Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված լիազորություններ՝**

ա) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հարկային եկամուտների տեղեկատվական տվյալների շտեմարանի հետ կապված աշխատանքները.

բ) ապահովում է իր կողմից սպասարկվող տեխնիկայի բնականոն և անխափան աշխատանքները

գ) պատասխանատվություն է կրում համակարգչային մուտքագրմամբ գյուղապետարանից մուտքագրվող ծառայողական գաղտնիք պարունակող փաստաթղթերի գաղտնիության ապահովման համար

դ) կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները պատշաճ և որակով

ե) հետևում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարություններին, համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է աշխատակազմի քարտուղարին

զ) իրականացնում է աշխատակազմի քարտուղարի մոտ ընդունելության համար քաղաքացիների մուտքագրումը

է) իր լիազորությունների սահմաններում անհրաժեշտության դեպքում նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր զեկուցագրեր և այլ գրություններ

ը) քարտուղարի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան

թ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ

**Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝**

- ունի առնվազն միջնակարգ կրթություն
- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <բ> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացությունը
- տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը
- ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն
- տիրապետում է ռուսերենին / ազատ/:

Մրցույթը կկայանա 2013 թվականի փետրվարի 25-ին ժամը 14:00-ին Արշալույսի գյուղապետարանի շենքում:

Դիմումի ընդունման վերջին ժամկետն է 30 հունվարի 2013թ.:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10:00-ից 16:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Այլ տեղեկությունների համար դիմել Արշալույսի գյուղապետարան ( հեռ. (0231) 6-09-36) կամ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (հասցե Աբովյան 71, հեռ. (0237) 2-76-49 (0237) 2-07-70):

Դիմող ՀՀ քաղաքացիները համայնքային ծառայության թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար պետք է անձամբ Արշալույսի գյուղապետարան ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում՝ (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս):
2. Կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները):
3. Արական սեռի անձինք ներկայացնում են զինգրքույկի կամ կցագրման վկայականի պատճենը:
4. Աշխատանքային գրքույկի պատճենը (ունենալու դեպքում):
5. Երկու լուսանկար՝ 3x4 չափսի:
6. Անձնագրի պատճենը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. ԳՐԻԳՈՐՅԱՆ